ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՔԻՄԻԱ

ԹԵՄԱ՝ <<Ձևավորող գնահատման արդյունավետությունը քիմիայի դասերին>>

Հետազոտող ուսուցիչ՝ Լուսինե Հովակիմյան
Ազարակի միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ Ալիսա Հարությունյան

<< Կապանի N2 ավագ դպրոց >> ՊՈԱԿ
2023

Բովանդակություն

1. Նախաբան ---------- 3
2 . Հետազոտության համատեքստում .
2.1 Գնահատման ժամանակակից մոտեցումները ----------4
2. 2 Ձևավորող գնահատում ----------6
2. 3 Ուսուցանող գնահատում----------9
2. 3 Ինգնագնահատում ----------10
3 . Գնահատումը՝ ուսման բարելավման միջոց ----------11
4 . Հետազոտության ընթացքը ----------12
5 . Ամփոփում ----------15
6 . Հավելված ----------16
7 . Գրականության ցանկ ----------17

Նախաբան

Տվեք երեխային հետաքրքրություն:
Գիտելիքը նա կգտնի ինքը:
Ա. Գին

Գիտելիքը անպարտելի ուժ է, որը հնարավորություն է տալիս հասնել ամեն ինչի , նվաճել բարձրունքներ , կերտել ապագադ ու քո լուման ներդնել աշխարհում: Գիտելիքը թույլ է տալիս իրականում ազդել կյանքի ու շրջապատի վրա: Ինձ համար գիտելիքն ավելի քան նյութական և հոգևոր մի բան է:: Կրթված մարդն, այնուամենայնիվ, գտնում է իր ճիշտ տեղն ու դիրքը՝ արժանանալով շրջապատի ուշադրությանն ու համակրանքին : Հետևաբար պետք է շարունակ լցնել ու հարստացնել գիտելիքների պաշարը՝ձգտելով ինքնազարգացման և հոգու կատա-ռելության:

Գնահատումը բարդ և ստեղծագործական աշխատանք է և յուրաքանչյուր մարդ իր կատարած աշխատանքի համար ակնկալում է, որպեսզի իրեն արժևորեն, գնահատեն իր կատարած աշխատանքը, իսկ կրտսեր դպրոցականների համար գնահատումը ուսումնական դրդապատճառների ձևավորման խթան է հանդիսանում: Գնահատումը սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների, ակտիվության, ինքնուրույնության, զարգացվածության, վարքի արժևորումն, որն իրականացվում է հանրակրթական չափորոշիչների հիման վրա, իսկ գնահատականը գնահատման հետևանքն է, և բնականաբար այն ավելի կոնկրետ է: Կրթական գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է Այն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, ինչպես նաև ստանալ դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջան պատկերը:

Հետազոտության համատեքստ

Գնահատման ժամանակակից մոտեցումները

«Գնահատում» բառը կրթական համատեքստում լայն հասկացություն է, այն ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է, նրա շնորհիվ պարզվում է յուրաքանչյուր սովորողի և դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը:

Գնահատումը գործընթաց է, որի շնորհիվ մենք ստանում ենք սովորողի մասին տեղեկություն, նրա առաջընթացի մասին տեղեկություն հավաքելով, վերլուծելով հանրակրթության բովանդակային և կազմակերպչական աշխատանքներիարդյունքները կարող ենք վերահսկել և ամփոփել:

Գնահատման հիմնական նպատակն է ստուգել սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների տիրապետման և յուրացման մակարդակը, նրանց անձնային որակները, ապահովել արժեքային որակների ձևավորումը և դրանց հիման վրա ապահովել ուսումնական գործընթացի արդյունավետությունը, ուսման որակի բացահայտումը, բարելավումը և վերահսկում, խթանելու սովորելու ձգտումը, բարելավելու կրթության որակը, ինչպես նաև նպաստում է սովորողի ինքնահաստատմանը, ինքնազարգացմանը:

Սովորողների ուսումնառության, առարկայական ծրագրերի և պլանների, չափորոշիչների, ինչպես նաև կրթական քաղաքականության մասին որոշումներ կայացնելիս գնահատումը սահմանվում է որպես տեղեկատվության ձեռքբերման գործընթաց: Սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների և նրանց մոտ ձևավորվող արժեքային համակարգի բարելավման նպատակով որոշումներ կայացնելիս հաշվի են առնվում ուսուցման կազմակերպումը, ուղղորդումը և խորհրդատվությունը,

կրթական հնարավորությունների բացահայտումը, սովորողների ձեռքբերումների և իմացության աստիճանի ամրագրումն ու վկայագրումը: Գնահատումը տեղեկատվության հավաքումն է այն մասին, թե ուսումնառության նպատակի որ աստիճանին է հասել սովորողը: Այդ տեղեկությունների համար աղբյուր են գրավոր թեստերի արդյունքները, լաբորատոր և այլ գործնական, հետազոտական բնույթի գրավոր աշխատանքները, տնային առաջադրանքի կատարման մակարդակը, լաբորատոր և այլ գործնական նախագծերը, բանավոր հարցումները, կիսամյակային միավորային աշխատանքները և ուսուցանող գնահատման ուղղությամբ արված աշխատանքների մասին գրանցումները:

Աշակերտի համար գնահատականը պետք է խրախուսի, արձանագրի աճը, տարբերակի ուժեղ և թույլ կողմերը, հաջողություններն ու վրիպումները: Երբե՛ք սովորողին ուղղված գնահատականը չպետք է վերաբերի նրա անձին, այլ կոնկրետ գործողություններին, արարքներին, գործունեության արդյունքներին: Եթե սովորողը խնդիր չի կարողանում լուծել, դեռևս հիմք չէ դատողություններ անելու նրա մտավոր ընդունակությունների մասին:

Ուսուցչի համար սովորողի գնահատականը պետք է լինի աշխատանքը պլանավորելու, փոփոխություններն արձանագրելու, նպատակին հասնելու աստիճանը պարզելու, արդյունքը փաստելու, սովորողի թույլ և ուժեղ կողմերը արձանագրելու և դրա շուրջ աշխատանք տանելու միջոց:

Ի՞նչ է ձևավորող գնահատումը

Ձևավորող գնահատումը հնարավորություն է տալիս պարզելու յուրաքանչյուր սովորողի և ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարություններն ու բացթողումները: Ձևավորող գնահատումն ապահովում է հետադարձ կապն ուսումնական գործընթացում :Յուրաքանչյուր սովորողի մասին խոսելիս պետք է նշելձևակերպված վերջնարդյունքներից երեխան բավարարել է այս պահանջը, այն պահանջը , ունի ձեռքբերումներ: Այսինքն վեր հանել,բացահայտել երեխայի ձեռքբերումները, ոչ թե բացթողումները: Կարևոր է ,որ աշակերտը կարողանա գտնել հետևյալ հարցերի պատասխանները.

- Ինչպե՞ս հասա այս արդյունքին
- Ինչպե՞ս ինձ հաջողվեց
- Ի՞նչ պետք է անել, որ արդյունքը բարելավվի



Ձևավորող գնահատման կետերն են



Պետք է իմանաք, թե որտեղից սկսենք ուսումնառության գործընթացը, իրականացնենք տարբեր հայտորոշումներ, տարբեր հարցերի միջոցով պարզելու, թե ինչ բացթողումներ և ձեռքբերումներ ունեն սովորողները, ինչ ուղղությամբ պետք է բարելավել ուսումնառության գործընթացը:Ձևավորող գնահատումը որպեսզի փոխվի, լինի հաջողված, պետք է զարգացնենք մեր մոտիվացիան և կարողունակությունը: Ձևավորող գնահատման նյութեր կազմելու և կիրառելու համար՝

- Պետք է փոխվի սովորողների վերաբերմունքը ձևավորող գնահատմաննկատմամբ և մեծացվի նրանց ներգրավվածությունը:
- Կարևորություն տրվի թիմային աշխատանքին և համագործակցային միջավայրին:
- Մեկնաբանվի ոչ միավորային գնահատման արդյունքների գնահատման ձևերը:

Ձևավորող գնահատումը հնարավորություն է տալիս ուսուցչին պարզել ուսումնական գործընթացում յուրաքանչյուր սովորողի, խմբի, դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, խոչընդոտները, բացթողումները և իրավիճակի վերլուծությունից հետո մշակել գործողությունների հետագա քայլերը՝ յուրաքանչյուր սովորողի, խմբի կամ դասարանի ընթացիկ առաջադիմությունը բարելավելու նպատակով: Գնահատման այս ձևի առանձնահատկություններից է հետադարձ կապի

առկայությունը:Հետադարձ կապը մեկնաբանությունների, վերլուծությունների միջոցով պետք է հանգեցնի դասավանդման ընթացքում ծագած թերությունները շտկող գործողությունների:

Այդ դեպքում սովորողը համեմատվում է հիմնականում ինքն իր հետ՝ պարզելով իր առաջընթացը: Սովորողներն ուսուցչի օգնությամբ, ինքնագնահատմամբ ու փոխադարձ գնահատումների միջոցով պարզում են տվյալ ուսումնական նյութի յուրաքանչյուր քայլի յուրացման աստիճանը և իրենցից յուրաքանչյուրի առաջադիմության իրական պատկերը:

Ուսուցանող գնահատումը հնարավորություն է տալիս ուսուցչին պարզել ուսումնական գործընթացում յուրաքանչյուր սովորողի, խմբի, դասարանի ձեռքբերումները, դժվարությունները,խոչընդոտները, բացթողումները, և իրավիճակի վերլուծությունից հետո մշակել գործողությունների հետագա քայլերը՝ յուրաքանչյուր սովորողի, խմբի կամ դասարանի ընթացիկ առաջադիմությունը բարելավելու նպատակով: Գնահատման այս ձևի առանձնահատկություններից է հետադարձ կապի առկայությունը: Հետադարձ կապը մեկնաբանությունների, վերլուծությունների միջոցով պետք է հանգեցնի դասավանդման ընթացքում ծագած թերությունները շտկող գործողությունների: Այդ դեպքում սովորողը համեմատվում է հիմնականում ինքն իր հետ՝ պարզելով իր առաջընթացը: Սովորողներն ուսուցչի օգնությամբ, ինքնագնահատմամբ ու փոխադարձ գնահատումների միջոցով պարզում են տվյալ ուսումնական նյութի յուրաքանչյուր քայլի յուրացման աստիճանը և իրենցից յուրաքանչյուրի առաջադիմության իրական պատկերը: Ուսուցանող գնահատման արդյունքների հիման վրա, հետադարձ կապով, ուսուցիչը գնահատում է պետական չափորոշիչների, դասավանդման ծրագրերի և մեթոդների արդյունեվետությունը, կատարում իրավիճակից բխող փոփոխություն:

Հետադարձ կապն ունեցած տեղեկատվության հիման վրա վիճակի բարելավման անընդհատ գործընթաց է: Դա նաև տեղեկատվություն է արվող

աշխատանքների վրա դրվող ջանքերի ու առաջադրվող լուծումների ուղիների բարելավման մասին: Հետադարձ կապը կարող է լինել բանավոր, գործնական կամ գրավոր աշխատանքների՝ ներառյալ միավորային գնահատման արդյունքների քննարկումն ուսուցանող նպատակով: Դրա հիմքում գլխավորապես ուսուցչի անդրադարձն է սովորողի կատարած աշխատանքին: Հետադարձ կապի ամբողջականության համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև սովորողների միջև փոխադարձ գնահատումները, ինչպես նաև սովորողի ինքնարժևորումը: Հետադարձ կապն առավել օգտակար է այն դեպքում, երբ այն միտված է առաջադրանքի բուն ուսումնական նպատակին, քան այլ հանգամանքների: Երբեմն ուսուցիչն ավելի շատ հետևում է երկրորդական հանգամանքներին:

Ուսուցանող գնահատում

Ուսուցանող գնահատումը միտված է դպրոցներում դասավանդման և ուսումնառության արդյունավետության բարձրացմանը: Դրանից հատկապես մեծ օգուտ կունենան ցածր առաջադիմությամբ սովորողները, իսկ առաջավոր սովորողները առավել կխորացնեն իրենց գիտելիքները: Ուսուցանող գնահատման դեպքում օգտագործվում է ոչ թե թվանշանային կամ այլ նիշային գնահատումը, այլ սովորողի առաջընթացը բնութագրող որակումներ և մեկնաբանություններ: Ի վերջո, նշենք, որ ուսուցանող գնահատումը ձեռքբերումների և հնարավորությունների առկա և ցանկալի վիճակների միջև եղած ճեղքվածքի վրա ուշադրության սևեռումն է: Լինելով ֆորմատիվ՝ ձևավորող, տեղեկությունների հավաքումը պետք է օգտագործվի սովորեցնելն ու սովորելը սովորողի կարիքների բավարարմանը հարմարեցնելու նպատակով: Ուսուցանող և ձևավորող եզրույթները հաճախ գործածվում են որպես հոմանիշներ: Խիստ ասած՝ ուսուցանող գնահատումն ընդհանուր տերմին է, որն օգտագործվում է գնահատման գործադրումը նկարագրելու համար:

Ուսուցանող գնահատման էությունը հնարավոր բոլոր ձևերով սովորելուն

աջակցելն է: Ֆորմատիվ (ձևավորող) գնահատումն ուսուցանող գնահատման ենթամաս է, որի բնութագիրն ուսումնական նյութը յուրացնելու ընթացքում սովորողի թույլ տված թերըմբռնումներն ու սխալները հայտնաբերելը և դրանք վերացնելն է: Սովորողների առաջընթացը բացահայտող ստուգման որոշ ձևեր կարելի է օգտագործել թե՛թվանշանային գնահատման, թե՛ ուսուցանող գնահատման ձևերով:

ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄ

Հանրակրթության պետական նոր չափորոշիչն ունի 8 հիմնական կարողունակություն, որոնցից է «սովորել սովորելու կարողունակությունը»:Սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Ինքնագնահատում իրականացնելիս սովորողը ոչ թե զուտ մեխանիկական աշխատանք է իրականացնում, այլ գործի է դնում իմացական գործընթացները, ինչպես նաև հիմքեր է ստեղծում ստեղծագործական մտածողության համար: Ինքնագնահատման հիմքը կազմում է վերլուծությունը, որը վերաբերում է ոչ միայն արդյունքներին, այլև գործընթացքին, ներդրած ջանքերին, վերաբերմունքին և այլն, իսկ ինքնագնահատման համար անհրաժեշտ է սանդղակ՝ հստակ չափորոշիչներով:

Ինչպե՞ս ես գնահատում թեմային ուսումնասիրումը: Գրվում են

«Շատ լավ», «Լավ», «Ոչ այնքան լավ», «Վատ» բառերից մեկը:



Գնահատումը՝ ուսման բարելավման միջոց:

Կրթական բարեփոխումների ներկա փուլում կարևոր տեղ է տրվում գնահատման համակարգի արմատական բարեփոխմանը: Առավել արդիական է դառնում գնահատումն օգտագործել ոչ միայն որպես ուսուցման արդյունքներ ստուգման այլ նաև որպես ուսուցումը բարելավելու միջոց: Սակայն պակաս կարևոր չէ ուսուցչի մոտեցումները: Շատ կարևոր է, որ ուսուցիչը դասը սկսի լավ տրամադրությամբ և ջերմ ողջույնով, աշակերտների դրական լիցքեր հաղորդելով, ինչը կստեղծի ջերմ և անմիջական մթնոլորտ: Առաջնահերթություն է նաև աշակերտների արտահայտվելու հնարավորությունը / չանտեսելով ոչ մեկին /, յուրաքանչյուր պատասխանի կարևորությունը: Դա հնարավորություն է տալիս վերհանել թերությունները, ամրապնդել գիտելիքները: Պետք է աշակերտի մոտ ձևավորել դժվարությունները հաղթահարելու կարողություն, որպեսզի աշակերտը վստահի սեփական ուժերին: Ժամանակ առ ժամանակ հարցերի, դիտարկումների միջոցով փորձել ստուգել, թե արդյոք սովորողները չեն շեղվել նախատեսված ուղուց: Ձևավորող գնահատման հնարների միջոցով կբացահայտվեր ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները: Հետևաբար հետազոտական աշխատանքի թեման արդիական է, քանի որ կպարզի, թե ինչպես է ազդում ձևավորող գնահատումը ուսումնառության արդյունքների վրա: Ինձ թվում է, որ գործընթացից հատկապես մեծ օգուտ կունենան ցածր առաջադիմությամբ սովորողները, իսկ առաջավոր սովորողները առավել կխորացնեն իրենց գիտելիքները:

Հետազոտման ընթացքը

Հետազոտումը կատարվել է 9- րդ դասարանում ,, Էլեկտրոլիտային դիսոցում՞՞ թեմայից: Հետազոտության ընթացդում դիտարկվեցին աշակերտների մթքերը շարադրելու ,
ինքնուրույն աշխատելու կարողությունը: Աշակերտներին հնարավորություն ընձեռնվեց ուսուցչի կամ դասընկերների օգնությամբ լրացնել բացթողումները:
Դասարանին տրամադրվել է թեստ (տես հավելված) : Աշխատանքի տևողությունը՝ 20 րոպե: Ընթացքում կատարվեց ,,ջերմաչաթում՞: Նպատակն էր բացահայտել ,թե սովորողները որքանով են ճիշտ հասկացել պահանջները , մատչելի են արդյոք առաջադրանքները:

Աշակերտների արձգանքը հետևյալն էր.



Որոշ աշակերտներին տրվեց հուշում և աշխատանքը շարունակվեց: Աշխատանքը ավարտելուց հետո կատարվեց ինքնագնահատում: Ուսուցչի կողմից մեկնաբանվում էին հարցերի պատասխանները: Յուրաքանչյուր աշակերտ ինքը ստուգեց իր կատարած աշխատանքը , կատարվեց ինքնագնահատում: Աշակերտները իրենց գնահատեցին հետևյալ կերպ .



Աշխատանքները ստուգվեցին նաև ուսուցչի կողմից: Պայմանական գնահատականները ներկայացվեցին աշակերտներին և անմիջապես առաջարկվեց բարելավել իրենց գիտելիքը: Աշակերտների մի մասը գոհ էր աշխատանքի արդյունքից և ցանկացավ միավորային դնահատվել: Մյուս մասը չցանկացավ միավորային գնահատվել , քանի որ վստահ էին ր որ կարող էին ավելի լավ կատարել աշխատանքը: Աշակերտների ևս մեկ խումբ հայտնեց ,որ աշխատանքը իրենց

համար շատ հեշտ էր և ցանկացան ավելի բարդ աշխատանք կատարելուց հետո գնահատվել: դիագրամը հետևյալն էր `



ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով արդյունքները կարելի էասել , որ

1. Սովորողները ավելի լավ են աշխատում դասի ընթացքում, երբ հարցերը լինում են մատչելի :
2. Աշակերտները ավելի անկաշկանդ են , երբ գիրեն, որ չհաջողված աշխատանքի դեպքում իրենց տրվելու է հնարավորություն բարելավելու իրենց գիտելիքների որակը: Նրանք ավելի նքնավստահ են դառնում և ձգտում են ավելիին:
3. Ինքնագնահատում կատարելիս ավելի հեշտ են գտնում իրենց վրիպումները:

ՀԱՎԵԼՎԱԾ

Թեստ /տևողությունը 20 րոպե /

Շարունակել միտքը՝

1. Էլեկտրական հոսանքը ----------

---

2. Իոնները ---------- մասնիկներ են:

3. Դրական լիցք ունեցող իոնը կոչվում է ----------

4. Բացասական լիցք ունեցող իոնը կոչվում է ----------

5. Էլեկտրոլիտներ են այն նյութերը , ----------

---

6. Ոչ էլեկտրոլիտներ են այն նյութերը , ----------

---

7. Ջրային լուծույթում նյութի տրոհումը իոնների կոչվում է ----------

8. Դիսոցման մեխանիզմներն են ----------

9. Նշել դիսոցման մեխանիզմը՝ HCl ---------- , NaCl ----------

10. Դիսոցել հետևյալ նյութերը՝ NaCl , KOH , KNO_3

Գրականության ցանկ

1 . Ուսումնական նյութեր / հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների մասնագիտական զարգացման վերապատրաստման դասընթացից /:
2. Համացանց:
3. Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարձրացման խթան : Ուսուցչի ձեռնարկ / Օ. Ա. Միքայելյան /:
4. << Դպրոցական տարիքում սովորելու մոտիվացիայի ձևավորում>> /
Ա. Կ. Մարկովա/ Մոսկվա 1983 :